

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ

Այս տարվա մայիսի 16-ին լրացավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 80-ամյակը: Այդ հորեյանը արժանավայել կերպով դիմավորելու նպատակով ս. ք. հունվարի 22-ին կառավարության որոշմամբ, ՀՀ վարչապետի նախագահությամբ ստեղծվեց հանրապետական հորելյանական հանձնաժողով:

Հիշյալ հանձնաժողովին հանձնարարվել էր երկամսյա ժամկետում կազմել և ՀՀ կառավարությունը ներկայացնել հանրապետության մայր բուհի հիշարժան տարելիցին նվիրված միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև նախապատրաստական աշխատանքներ տանել հորեյանը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

ՀՀ վարչապետի որոշումից անմիջապես հետո ԵՊՀ ղեկավոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ ստեղծվեց համալսարանական կազմկոմիտե, որի մշակած միջոցառումների համալիր ծրագրով պետք է մայր բուհի 80-ամյակի առթիվ ինչպես համալսարանում, այնպես էլ Երևան քաղաքում և հանրապետության տարբեր մարզերում ու Արցախում տեղի ունենային մի շարք գիտական նստաշրջաններ, ցուցահանդեսներ, ուսանողական օլիմպիադաներ ու մշակութային փառատոներ:

* * *

Երևանի պետական համալսարանի 80-ամյակին նվիրված հորեյանական միջոցառումների շարքն սկսվեց մայիսի 18-20-ը Գյումրի քաղաքում կայացած եռօրյա գիտաժողովով: Հայտնի է, որ Երևանի համալսարանը 1920 թ. հունվարի 31-ին բացվել և մեկ կիսամյակ գործել է Ալեքսանդրապոլում (այժմ Գյումրի): Ուստի հորեյանական առաջին գիտաժողովի անցկացումը հանրապետության երկրորդ քաղաքում հենց այդ իրողությունն էր խորհրդանշուն:

Հորեյանական գիտաժողովի բացումը տեղի ունեցավ Գյումրիի վարդան Աճեմյանի

անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում: Լիագունար նիստին Երևանի պետական համալսարանի ղեկավարատի, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներից, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի ղեկավարներից բացի, մասնակցում էին նաև հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահը, մի շարք բուհերի ղեկավարներ, մեծ թվով ճանաչված գիտնականներ, դասախոսներ, ուսանողներ և նախկին համալսարանականներ:

Բացելով լիագունար նիստը՝ ԵՊՀ ղեկավոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ համալսարանի առաջին և զլխավոր խնդիրը միշտ եղել ու մնում է տարբեր բնագավառների համար բարձրակարգ մասնագետների պատրաստումը: Հանրապետության առաջատար բուհն անցած 80 տարիների ընթացքում երկրին տվել է շուրջ 70 հազար շրջանավարտ, որոնք ներկայումս աշխատում են աշխարհի բոլոր մայրցամաքներում ու գրեթե բոլոր երկրներում: Նրա մյուս կարևոր խնդիրը, շարունակեց ղեկավորը, եղել և մնում է մեր ազգային նկարագրին սատարելը, գործունե մասնակցությունը ազգային խնդիրների լուծմանը: Դրա համար ևս Երևանի պետական համալսարանը ոչինչ չի խնայել, և եթե պահանջվել է, ապա համալսարանականները նաև իրենց կյանքն են տվել: Հարյուրավոր համալսարանականներ են կռվել ու զոհվել Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում, իսկ արցախյան ազատագրական պայքարի ընթացքում իրենց հայրենասիրությամբ ու նվիրումով աչքի ընկան մեր շատ ուսանողներ ու դասախոսներ, որոնցից 27-ը զոհվել են Հայաստանի սահմանները պաշտպանելիս և Արցախի գոյապայքարում:

Մեր մայր բուհը, շարունակելով իր խոսքը՝ ասաց ղեկավորը, իբրև Հայաստանի

անդրանիկ գիտակրթական օջախ, կարևոր դեր է խաղացել համրապետության գիտությունների ակադեմիայի ստեղծման գործում, որի հիմնադիր անդամներից շատերը եղել են Երևանի պետական համալսարանի պրոֆեսորներ: Հետագա տասնամյակներում ևս Հայաստանի գիտությունների ակադեմիան պարբերաբար համալրվել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից:

Երևանի պետական համալսարանը բացառիկ դեր է խաղացել նաև Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական հաստատությունների ստեղծման գործում: Այսօր Հայաստանում գործող թվով 15 պետական բուհերի մեծ մասը սերում է համալսարանից:

Բացի այս ամենից, ասաց Ռ. Մարտիրոսյանը, Երևանի պետական համալսարանը գիտական ու դասախոսական կադրեր է պատրաստել բուհերի համար: Նա նշեց նաև, որ այսօր համալսարանի շրջանավարտներից շատերը սովորում են աշխարհի շատ հայտնի համալսարանների ասպիրանտուրաներում, որոնք, պաշտպանելով թեկնածուական ատենախոսություններ, վերադառնում են մայր հայրենիք ու շարունակում ավագ սերնդի հայրենամկեր գործը, նվիրվում գիտական ու մանկավարժական աշխատանքի: Ներկայումս Երևանի համալսարանը գիտամշակութային լայն կապեր ունի աշխարհի 70-ից ավելի առաջատար համալսարանների հետ, որոնց հետ կատարվում են ուսանողների ու դասախոսների փոխանակություն, մշակվում միջազգային գիտական կարևոր ծրագրեր:

Երևանի պետական համալսարանը, իր խոսքի վերջում ասաց ռեկտորը, ներկայումս վերկառուցման փուլում է, և հատկապես վերջին 3-4 տարիներին կատարված աշխատանքների շնորհիվ այդ ճանապարհի հիմնական դժվարությունները, կարելի է ասել, արդեն հաղթահարվել են և մեր մայր բուհը դուրս է եկել ուսումնագիտական գործունեության լայն ասպարեզ:

Երևանի պետական համալսարանի հիմնադրման և նրա ութ տասնամյակների հարուստ պատմությանն էր նվիրված ԵՊՀ թանգարանի տնօրեն, պրոֆ. Լ. Ղարիբջանյանի զեկուցումը:

Զեկուցողը, հանգամանորեն ներկայացնելով համալսարանի ստեղծման պատմությունը, այնուհետև անդրադարձավ անցած ութսուն տարիներին մեր ժողովրդի կրթական, գիտական, մշակութային ու հասարակական-

քաղաքական կյանքում Երևանի պետական համալսարանի դերին, նրա պատմության կարևոր ժամանակահատվածներին, վերլուծեց ուսումնագիտական ու հասարակական-քաղաքական աշխատանքները:

Զեկուցումից հետո գիտաժողովի լիագումար նիստում ԵՊՀ 80-ամյակը սրտաուշ խոսքերով ողջունեցին Շիրակի մարզպետի պաշտոնակատար Ս. Պետրոսյանը, ՀՀ կրթության և գիտության առաջին փոխնախարար Ռ. Մարուխյանը, ԵՊՀ նախկին ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանը, ՀՀ ԲՈՂ-ի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բաղդասարյանը, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Գ. Կիրակոսյանը, ԵՊՀ շրջանավարտ, ներկայումս Գյումրիի ոչ պետական բուհի ամբիոնի վարիչ Մ. Խաչատրյանը: Հատկապես ջերմ ու հուզիչ էր վերջինիս ելույթը, որը բարձր գնահատեց համալսարանի դերն ու նշանակությունը մեր ժողովրդի գիտամշակութային կյանքում: Ջերմորեն ընդունվեց նաև տեղի Շիրակացու անվան համալսարանի բազային դպրոցի փոքրիկ սաների չափածո ողջույնը ԵՊՀ 80-ամյակին:

Գիտաժողովի լիագումար նիստը եզրափակեց ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը: Նա շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության առթիվ և Շիրակի մարզի ու Գյումրի քաղաքի մի խումբ անձանց հանձնեց ԵՊՀ հոբելյանական հուշամեդալներ:

Ապա Գյումրիի նորաստեղծ պետական սինֆոնիկ նվագախմբի ուժերով տեղի ունեցավ համերգ, որն ունկնդիրների կողմից ընդունվեց ջերմությամբ:

Համերգից հետո գիտաժողովի մասնակից հյուրերը ծանոթացան քաղաքի տեսարժան վայրերին, այցելեցին պետական պատկերասրահ, եղան Զիթոզյանների ճարտարապետական համալիրում, դիտեցին այնտեղ պահվող գեղանկարչության և կիրառական արվեստի հետաքրքիր հավաքածուները, արխիվային վավերագրերն ու թանգարանային առարկաները:

* * *

Լիագումար նիստի մասնակիցներին, որպես անակնկալ, բաժանվեց «Երևանի համալսարան» և «Անանիա Շիրակացի» թերթերի խմբագրությունների միացյալ ուժերով պատրաստված հատուկ թողարկումը, որն ամբողջությամբ նվիրված էր մայր կրթօջախի հոբելյանին: Սա ևս խորհրդա-

նշակամ էր այդ օրվա համար, քանի որ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացման օրը՝ 1920 թ. հունվարի 31-ին, այստեղ լույս էր տեսել «Հայաստանի համալսարան» միօրյա թերթը և նրա հասույթը նվիրվել էր չքավոր ուսանողության օգնության ֆոնդին:

* * *

Այնուհետև, մայիսի 19-ին և 20-ին գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մասնաճյուղերում, որոնց միստերն անցկացվեցին Գյումրիի բարձրագույն ուսումնական հաստատություններում, ՀՀ ԳԱԱ երկրաֆիզիկայի և իժմեներային երկրաշարժագիտության ինստիտուտում: Գիտաժողովի 18 մասնաճյուղերում բնական, հումանիտար և հասարակագիտական գիտությունների գծով կարդացվեց շուրջ 170 զեկուցում:

Հրեյանական գիտաժողովը նախածեռնել էին Շիրակի մարզպետարանը, Գյումրիի գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները և Երևանի պետական համալսարանը:

* * *

Երևանի պետական համալսարանի հոբեյանին էր նվիրված ԵՊՀ պրոֆեսորադասախոնական կազմի և ասպիրանտների տարեկան գիտական նստաշրջանը, որն իր աշխատանքներն սկսեց սեպտեմբերի 22-ին: Չորս օրվա ընթացքում նրա 20 բաժանումներում ու 44 մասնաճյուղերում կարդացվեց շուրջ 700 զեկուցում, որոնցում վեր հանվեցին բնական ու ճշգրիտ, հումանիտար ու հասարակագիտական գիտությունների ուղղությամբ Երևանի պետական համալսարանում վերջին տարիներին կատարված հետազոտությունների արդյունքները:

* * *

ԵՊՀ հոբեյանական միջոցառումների ծրագրի մեջ էր մտնում նաև ուսանողական գիտական ընկերության նստաշրջանը, որը միաժամանակ նվիրված էր այդ ընկերության հիմնադրման 50-ամյակին: Լիազումար միստը տեղի ունեցավ սեպտեմբերի 30-ին Ե. Չարենցի անվան դահլիճում, որը բացեց ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը: Նա իր խոսքում նշեց, որ ցանկացած կազմակերպության կեսդարյա հոբեյանի նշումն իսկ արդեն հիշարժան է:

Այսպես կարևորեց ՌԳԸ դերը ուսանողության գիտակրթական մակարդակը բարձրացնելու գործում՝ միաժամանակ նշելով, որ շատ գիտնականներ իրենց հետազոտական գործունեությունը սկսել են ՌԳԸ-ից: Ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, ավարտելով իր խոսքը, վերջում ցանկություն հայտնեց ավելի աշխուժացած տեսնել ՌԳԸ աշխատանքները և ուսանողներին պատգամեց լավ սովորել, նվիրվել գիտության ու կրթության զարգացման գործին:

Այնուհետև «Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը երեկ և այժ» զեկուցումով հանդես եկավ ՌԳԸ խորհրդի նախագահ Ռ. Մարկոսյանը, որը հակիրճ ներկայացրեց ԵՊՀ ՌԳԸ անցած ուղին, խոսեց նրա գործունեության ճանապարհին եղած խոչընդոտների ու դժվարությունների, ՌԳԸ գործունեության տարբեր ոլորտների մասին, ներկայացրեց այն ծրագրերը, որոնք պետք է իրականացվեն ԵՊՀ-ում մինչև մոր դարամուտը:

Նիստին մասնկցում էին և ողջույնի խոսքով հանդես եկան ԵՊՀ ՌԳԸ հիմնադիր-նախագահ, ներկայումս փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆ. Յա. Խաչիկյանը և ուրիշներ, որոնք լուրջ ներդրումներ են կատարել իրենց նախընտրած գիտաճյուղերում:

«Համալսարանը և քաղաքացիական հասարակությունը»- այսպես էր կոչվում ԵՊՀ ուսանողական միության խորհրդի նախագահ Ա. Ալեքսանյանի զեկուցումը, որով նա հանդես եկավ լիազումար միստում:

Ամփոփելով միստի աշխատանքները՝ հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Ս. Հախումյանն ասաց, որ ներկայումս Հայաստանում գործում են 80-ից ավելի պետական և մասնավոր բուհեր, որոնց մեջ Երևանի պետական համալսարանը իր ծանրակշիռ հեղինակությամբ ու արտոնյալ կարգավիճակով կրում է առաջատարի դրոշմ, որի 80-ամյակը նշվում է մեծ շուքով ոչ միայն մեր հանրապետությունում, այլև արտասահմանում ու Ափյուռքում: Իր ելույթի վերջում նա ցանկություն հայտնեց ներկա գտնվողների հետ մեկտեղ նշել նաև մայր կրթօջախի 100-ամյակը՝ բարձր պահելով նրա վեհ կոչումը:

Մինչ լիազումար միստը, սեպտեմբերի 23-30-ը, ՌԳԸ ֆակուլտետային բաժան-

մուըքներում անցկացվել էին գիտական նստաշրջաններ, որոնցում կարդացվել էին 235 գեկուցումներ ու հաղորդումներ:

* * *

ԵՊՀ հոբելյանական արարողությունների շարքի հերթական միջոցառումներից էր գիտության երախտավորներից մի քանիսի նորակերտ հուշարձանների բացման հանդիսությունը, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 5-ին:

Մայր կրթօջախի կենտրոնական մուտքի դիմացի պուրակում, Մովսես Խորենացու հուշարձանի դեմ հանդիման տեղադրված միջնադարի մեծանուն մաթեմատիկոս ու աստղագետ Անանիա Շիրակացու արձանի բացմանը ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը հանդես եկավ և հակիրճ խոսքով ներկայացրեց Շիրակացու խոշոր ներդրումը մաթեմատիկայի, տիեզերագիտության և բնական մյուս գիտությունների զարգացման գործում:

Ապա ելույթ ունեցան նախկին համալսարանական, ՀՀ կառավարությանն առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ծեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արևշատյանը և ուրիշներ, որոնք արժևորելով հռչակավոր գիտնականի տեղն ու դերը հայ և համաշխարհային բնագիտական մտքի զարգացման գործում՝ միաժամանակ կարևորեցին գիտնականի արձանի տեղադրումը հանրապետության առաջատար կրթօջախի կենտրոնական մուտքի առջև:

Այնուհետև սպիտակ սավանդ դանդաղ սահում է քարե հուշակոթողի վրայից, և ամբողջ հասակով մեկ վեր է հանում միջնադարի մեծ մտածողի ու տիեզերագետի գեղեցիկ արձանը՝ իր գիտական նախափորությունները խորհրդամշող երկրի գունդը ձեռքին:

Անանիա Շիրակացու հուշարձանի բացման արարողությունը եզրափակվեց նրա հեղինակ, կյանքից անժամանակ հեռացած քանդակագործ Արամ Ղարիբյանի հարսի՝ Արփինե Ղարիբյանի շնորհակալական խոսքով:

Տոնական տրամադրությամբ համակված՝ ներկաներն այնուհետև մասնակցեցին կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում ԵՊՀ մյուս երախտավորների կիսանդրիների կողքին տեղադրված ԵՊՀ առաջին ռեկտոր, անվանի իրավագետ, պրոֆ. Յու. Ղամբարյանի և աշխարհահռչակ աստղաֆիզիկոս,

համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնի հիմնադիր ու անփոփոխ վարիչ (1946-1996 թթ.), ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի կիսանդրիների բացման արարողությունը, որին ներկա էր նաև դրանց հեղինակը՝ քանդակագործ Տարիել Հակոբյանը:

Մինչ կիսանդրիների բացումը, ներկաներին ողջունեց և աշխարհահռչակ աստղագետի գիտական հարուստ ժառանգությունը ներկայացնող բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը: Իսկ ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն իր խոսքում կարևորեց Հայաստանի համալսարանի առաջին ռեկտորի կիսանդրու տեղադրումը մայր բուհում, քանի որ, ինչպես նշեց ելույթ ունեցողը, պրոֆ. Յու. Ղամբարյանը՝ մեծ ջանքեր է գործադրել Հայաստանի անդրամիկ համալսարանի հիմնադրման ու կայացման գործում: Նրա ղեկավարությամբ են կազմվել համալսարանի անդրամիկ ծրագրերն ու ուսումնական պլանները, առաջինը նա է որպես դասախոսներ իր շուրջը համախմբել շատ անվանի գիտնականների, ասաց ռեկտորը: Սակայն, ցավոք, նշեց նա, մենք մինչև այժմ սուղ կենսագրական տեղեկություններ ունենք մեր առաջին ռեկտորի մասին, չգիտենք, թե Փարիզ տեղափոխվելուց հետո ինչով է զբաղվել և գիտահետազոտական ինչ գործունեություն է ծավալել նա, նույնիսկ մեզ հայտնի չէ նրա գերեզմանի տեղը: Եվ այսօր պրոֆ. Յու. Ղամբարյանի կիսանդրու բացումը իր իսկ կողմից հիմնադրված համալսարանի ճեմասրահում արժանի գնահատումն է նրա կատարած աշխատանքի և հավերժացումը նրա պայծառ հիշատակի:

Բացի համալսարանականներից, արձանների բացմանը ներկա էին նաև ՀՀ Աժ փոխնախագահ Յու. Բախշյանը, մի խումբ պատգամավորներ, արվեստի գործիչներ, արտասահմանյան հյուրեր ու լրագրողներ:

* * *

«Համալսարանական կրթությունը և գիտությունը երրորդ հազարամյակում»- այս հիմնախնդիրն էր քննարկվում երևանի պետական համալսարանի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 5-ին և 6-ին գիտխորհրդի նիստերի դափնիքում: Նրա աշխատանքներին, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի անդամներից բացի, մաս-

նակցում էին նաև աշխարհի տարբեր համալսարանների ու գիտական կենտրոնների ճանաչված մասնագետներ, հանրապետության մի շարք բուհերի ղեկավարներ ու առաջատար գիտաշխատողներ, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ու կուսակցությունների ղեկավարներ:

Բացման խոսքով հանդես եկավ գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, ԵՊՀ ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, որը կարևորեց նրա նշանակությունը համալսարանների գիտամշակութային կապերի ամրապնդման գործում և միաժամանակ նշեց, որ երրորդ հազարամյակում էլ ավելի են բարձրանալու համալսարանական կրթության և գիտության դերն ու նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում: Ապա նա ներկայացրեց գիտաժողովի ծրագիրն ու աշխատակարգը, իսկ այնուհետև առաջինը հանդես եկավ զեկուցումով, որի վերնագիրն էր «Երևանի պետական համալսարանը այսօր և վաղը»:

Զեկուցողը հիմնականում կանգ առավ Երևանի պետական համալսարանում իրականացվող բարեփոխությունների վրա, հատկապես անդրադարձավ եռաստիճան կրթական համակարգին անցնելու անհրաժեշտության խնդիրներին և ներկայացրեց համալսարանում այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները: Զեկուցողն անդրադարձավ նաև ԵՊՀ միջազգային կապերին ու փոխհարաբերություններին, որոնք օրըսօրե ընդլայնվում են՝ ընդգրկելով նորանոր երկրներ:

ՀՀ կրթության ու գիտության նախարար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդ. Ղազարյանի զեկուցումը նվիրված էր «Կրթության առաջնահերթ խնդիրները առկա փուլում» թեմային: Զեկուցողը համզամանորեն ներկայացրեց ծավալված այն աշխատանքները, որոնք միտված են ներհանրապետությունում բարձրագույն և միջնակարգ կրթությունը ներկա ծանր վիճակից դուրս բերելու և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ ծավալվող աշխատանքները: Նա խոսեց ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների թարմացման ու բարեփոխման խնդիրների մասին, որոնք արդի փուլում կատարվում են Հայաստանի Հանրապետությունում:

Գիտաժողովի մասնակիցները մեծ հե-

տաքրքրությամբ լսեցին Մուսկվայի Ս. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ղեկավար, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Վ. Ա. Սադովնիչի «Բարձրագույն դպրոցի ռեֆորմը Ռուսաստանի դաշնությունում» թեմայով զեկուցումը: Ներկաների ուշադրությունը հրավիրելով ինչպես ԱՊՀ երկրների, այնպես էլ ՌԴ կրթության համակարգում ներկայումս տեղի ունեցող մեծ վերափոխությունների վրա՝ միաժամանակ զգուշացրեց, որ դրանք կարող են չունենալ նաև ցանկալի արդյունքներ: Ըստ այդմ, ընդգծեց նա, Մուսկվայի համալսարանը զգույշ ու ձեռնպահ է մնում հախուռն փոփոխություններից, աշխատում է կրթության ռեֆորմը տեղայնացնել որքան հնարավոր է մտածված և հաշվի առնելով այդ ասպարեզում ունեցած մեր նախկին փորձն ու նվաճումները:

Իր զեկուցման մեջ Հայաստանի դժարոցներում և բուհերում օտար լեզուների դասավանդմանը առնչվող մի շարք հրատապ խնդիրներ արծարծեց Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի ղեկավար, պրոֆ. Ս. Ջուլյանը: Նա հատկապես ընդգծեց, որ այդ գործը բարելավելու և ամուր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է մշակել պետական հայեցակարգ, մի բան, որը ներկայումս չկա: Իր ասածի իսկությունը հաստատելու համար զեկուցողը բերեց մի շարք թվեր, վկայակոչեց բազմաթիվ փաստեր և եզրակացրեց, որ Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել օտար լեզուների (անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն) ուսուցման պետական այնպիսի հայեցակարգ, համաձայն որի հանրապետության բոլոր դպրոցներում ու բուհերում օտար լեզուները ուսուցանվեն հավասարապես, այլապես շուտով ֆրանսերենն ու գերմաներենը իրենց տեղը կզիջեն անգլերենին: Իսկ դա քաղաքակրթության ու գիտությունների զարգացման ներկա փուլում հղի է մեր ժողովրդի համար վտանգավոր հետևանքներով:

Հետաքրքրությամբ լսվեց նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի նախագահ Յու. Սարգսյանի և փոխնախագահ Գ. Թերզյանի համատեղ զեկուցումը: Հեղինակները իրենց տնօրինած բուհի փորձով ու օրինակով ներկայացրին մագիստրատուրայի և ասպիրանտուրայի պատկերը և ուրվագծեցին ուսուցման այդ համակարգերի հեռանկարները:

«Վարչական բարեփոխումներ և համալսարանի վերաբացահայտում», - այսպես էր վերնագրված գիտաժողովում Ֆրեզնոյի (Կալիֆորնիա) համալսարանի պատվավոր նախագահ, պրոֆ. Յ. Յակի կարդացած զեկուցումը: Ձեկուցողի կարծիքով վարչական համակարգը պետք է կազմակերպվի այնպես, որ առավելագույն ծառայի ուսուցման գործընթացներին: Նա կրթական հաստատությունների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ նրանք ստանձնեն վերափոխողների դեր և նորանվանություններ կատարեն իրենց ղեկավարած ուսումնական հաստատություններում: Ձեկուցողը հատկապես ընդգծեց, որ համալսարանների ղեկավարները պետք է կարողանան համատեղել վարչական գործը և նորարարությունը: Իր ասած այս միտքը հաստատելու համար օրինակ բերեց Երևանի պետական համալսարանը, որի ղեկավարը վերջին տարիներին կատարել է մի շարք բարեփոխություններ: Պրոֆ. Յ. Յակիը խոսեց նաև ԵՊՀ-ի ու Ֆրեզնոյի համալսարանի միջև ստեղծված սերտ համագործակցության և այդ համագործակցությունն էլ ավելի ընդլայնելու խնդիրների շուրջը:

Յետաքրքրությամբ լսվեց նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետի 1978 թ. շրջանավարտ, ներկայումս Յակոտիայի պետական համալսարանի պրոֆեսոր Պ. Ղազարյանի «Յամալսարանը որպես կրթական, գիտական և հոգևոր առաջընթացի կենտրոն Ռուսաստանի ազգային տարածաշրջաններում» թեմայով զեկուցումը: Յակոտիայի պետական համալսարանի օրինակով, նա ցույց տվեց այն խոշոր դերը, որ ունեցել և ունեն պետական համալսարանները Ռուսաստանի տարբեր հանրապետություններում ու ազգային օկրուգներում: Դրանք ոչ միայն կրթական հաստատություններ, այլև գիտության ու լուսավորության տարածման կենտրոններ են, որոնք տվյալ տարածաշրջանում իրականացնում են մեծ առաքելություն ժողովրդի առաջընթացի ու լուսավորության տարածման գործում:

Ո՞ր Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (քաղ. Դուբնա) պրոֆեսոր Ա. Միսակյանի զեկուցումը նվիրված էր «Յամալսարանական կրթությունը և գիտությունը՝ համագործակցության փորձը ԵՊՀ-ի և ՄՅՄ-ի միջև» թեմային, որի մեջ հեղինակը կոնկրետ օրինակներով ցույց տվեց այդ համագործակցության մեծ արդյունավ-

տությունը թե՛ մասնագետների պատրաստման և թե՛ համատեղ հետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ: Նա հայտնեց նաև, որ արդեն 10 տարի է, ինչ Դուբնայում գործում է համալսարան, որը մասնագետներ է պատրաստում միջուկային ֆիզիկայի գծով: Այդ նորաստեղծ համալսարանը և սերտ կապերի մեջ է ԵՊՀ-ի հետ:

Վերջում զեկուցողը ԵՊՀ ղեկավարին նվիրեց Երևանի պետական համալսարանի և ՄՅՄ-ի փոխհամագործակցության պատմությանը նվիրված իր հեղինակած գիրքը:

Յավայիի ամերիկյան համալսարանի փոխկանցցելի և նախագահ Յենրի Սաֆավին գիտաժողովում հանդես եկավ «Կրթությունը. XXI դարում» զեկուցումով, որտեղ ուրվագրվեց համալսարանական կրթության համակարգում գալիք հարյուրամյակում սպասվող տեղաշարժերն ու գործընթացները: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ իրենք մտադիր են բոլոր բուհերին կից ստեղծել գիտական ուղղվածության կրթական կենտրոններ: Վերջում Յ. Սաֆավին հայտնեց այն կարծիքը, ըստ որի առաջիկայում Ամերիկայից ուսանողների մեծ հոսք կլինի դեպի Յայաստան, քանի որ այստեղ ուսումնառությունն համեմատաբար ավելի էժան է:

Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոցի ավագ գիտաշխատող Ռ. Ռախմանի և Մեծ Բրիտանիայի բաց համալսարանի (Լոնդոն) դասախոս Է. Քրոմելի համատեղ զեկուցումը նվիրված էր անցումային շրջանում գտնվող երկրներում սոցիալական աշխատանքի ուսուցման խընդիրներին ու երկընտրանքներին: Իսկ Մաշտոցի քոլեջի (ԱՄՆ) պրոֆեսոր Գ. Խրիստյանի զեկուցման թեման էր «Դասախոս-ուսանող փոխհամագործակցության կառույցի ուժգնությունը», որի մեջ նա ամերիկյան ուսումնական հաստատությունների օրինակով ցույց տվեց այդ կառույցի տարբեր կողմերը: Ուսումնասիրությունները՝ հաստատում են, նշեց զեկուցողը, որ ինֆորմացիայի արագացված զարգացման ներկա պայմաններում գիտության, կրթության և մարդկային հարաբերությունների կառույցն ու դերերը արագորեն փոփոխվում են և ընկերության առաջ դնում են իրենց հարմարվելու ճակատագրական հրամայականը: Միաժամանակ խիստ փոքրանում է ընկերային կյանքի սխալների նկատմամբ թույլատու լինելու անցյալի առարկայական միտումը: Որքան կատարելագործվում է ընկերային կյանքի

կառույցը, այնքան մեծանում է սխալի բացասական ազդեցությունը կյանքի տարբեր ոլորտների վրա: Մի կողմից մարդ անհատը դժվարանում է հարմարվել հավաքական գործունեությանը ստեղծված ուժական ու արագացված փոփոխություններին, իսկ մյուս կողմից՝ խիստ նվազում է սխալի նկատմամբ կյանքի հանդուրժողականությունը: Այսպիսով, նշեց գեկուցողը, կրթական համակարգի, մասնավաճ բարձրագույն դըպրոցի առաջ այժմ դրվում է ոչ միայն ցարդ կուտակված ինֆորմացիան ուսանողներին հաղորդելու պարտականությունը, այլ նաև անընդհատ սովորելու, իրականության ելևէջներին մտեղծագործորեն հարմարվելու և կյանքի ուժական փոփոխությունների ընթացքին ակտիվորեն մասնակցելու անհրաժեշտությունը:

Ապա գեկուցողը նշեց, որ համալսարանների ուսումնական ծրագրերը երկու հիմնական մասից են կազմված: Առաջինում ընդգրկվում են այն նյութերը, որոնք խիստ անհրաժեշտ են տվյալ մասնագիտության տիրապետման համար: Երկրորդում առանձնացվում են երիտասարդի ընդհանուր զարգացման և որպես քաղաքացի ու դարու զավակ լինելու համար անհրաժեշտ առարկաները: Ուսանողների ճնշող մեծամասնությունը միտում է իր ուշադրությունը սեռեղ մասնագիտական առարկաների վրա ու ջանասիրությամբ սովորում է դրանք՝ անհրաժեշտ ուշադրություն չցուցաբերելով ընդհանուր զարգացման համար նախատեսված առարկաների յուրացման վրա: Մա ոչ միայն մպաստում է ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների թվի մեծացմանը, այլև բացասաբար է ազդում շրջանավարտի կյանքի հղջ ընթացքի վրա: Շատերը, հետագայում գիտակցելով իրենց սխալը, աշխատում են վերականգնել կորսվածը կամ ինքնազարգացումով և կամ էլ որոշակի դասընթացների հետևելով: Դասախոս-ուսանող հարաբերության օպտիմալացումը մեծապես կարող է նպաստել նշված տարածվող սխալի կանխմանը, վերջում՝ եզրակացրեց գեկուցողը:

Գիտաժողովում «Համալսարանի արդի գաղափարախոսական և մշակութային կողմնորոշումները» թեմայով հետաքրքիր գեկուցում կարդաց նաև ԵՊՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Զր. Շաքարյանը: Համալսարանը դիտարկելով որպես կրթամշակութային

երևույթ՝ գեկուցողը փորձեց իմաստավորել նրա տեղն ու դերը հանրապետության ժամանակակից գաղափարական կողմնորոշումներում, մասնավորապես նա նշեց, որ համալսարանը այն մնայուն ու հաստատուն արժեքներից է, որը հարագատ է մնացել իր կոչմանը գաղափարական բոլոր տարընթացությունների պայմաններում: Ըստ այդմ, նշեց նա, հայկական իրականության մեջ համալսարանի ծայրը լսելի է եղել բոլոր ժամանակներում և ամենուր, այդ թվում՝ նաև Սփյուռքում: Մինչդեռ, ցավոք, նույնը չենք կարող ասել մեր օրերի մասին, ժողովրդավարական ներկա փուլում ապասոցիալիզացված ու ապապրոֆեսիոնալիզացված հասարակական հարաբերությունների պայմաններում, ռադիո և հեռուստահաղորդումների բազմաքննյա ծրագրերում ու զանգվածային մամուլի էջերում գիտական-գաղափարական տարորոշված սկզբունքների փոխարեն տիրապետող են դարձել առօրեական պատկերացումները նույնքան առօրեական լեզվակազմի մակարդակով հանդերձ:

Այս կարգի մի շարք այլ սուր հարցադրումներից հետո գեկուցողը հանդուճումը հայտնեց այն մասին, որ Երևանի պետական համալսարանը այսուհետև ևս իր ավանդույթներին հավատարիմ կմնա այնքանով, որքանով որ ներկա պայմաններում կնպաստի ազգային մտածողությունը պետական մտածողության մակարդակին բարձրացնելու գործին, որքանով հայկական «ես»-ում անձնակազմը՝ այլևս խեղդամահ չի անի վերանձնակամին, առօրեականը՝ գիտակամին:

Գիտաժողովում աշխույժ հետաքրքրություն առաջացրեց ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Հարությունյանի «Համալսարանի սոցիալական դերը ժողովրդավարական անցումների ընթացքում» գեկուցումը, որտեղ հեղինակը ներկայացրեց ՀՀ-ում ԵՄ-ի կողմից վերջին չորս տարիներին (1995-1999 թթ.) ֆինանսավորվող միացյալ կրթական ծրագրի հիմնական խընդիրները: Խնդրո առարկա ծրագրի իրականացմանը մասնակցում են Լոնդոնի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի սոցիալական քաղաքականության բաժինը, Մեծ Բրիտանիայի Բաց համալսարանը, Ֆրանկֆուրտի բարձրագույն մասնագիտական դպրոցը (Ֆախիոխշուլե), Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ամ-

բիռնը, Գյումրիի և Վանաձորի մանկավարժական ինստիտուտները: Մասնակիցները ջանացել են ՀՀ սոցիալական հարցերին տալ կառուցողական պատասխաններ և գտնել դրանց իրականացման ուղիներ:

Մեր գործընկերների հիմնական նպատակն է, ասաց զեկուցողը, վեր հանել և կենտրոնանալ այն խնդիրների ու դիլեմաների վրա, որոնք հատուկ են միջազգային և միջպրոֆեսիոնալ համագործակցությանը: Սա ընդգրկում է տեսական, գործնական և էթիկ խնդիրներ սոցիալական աշխատանքի սահմանման մեջ, մտքերի փոխանակություններ և միջանտոլություններ ուսուցման մեթոդների մեջ, պրակտիկայի կազմակերպում, պրակտիկ ուսուցիչների վերապատրաստում, համագործակցություն և կոնֆլիկտ: Ահա այսպիսին է ԵՊՀ-ի սոցիալական դերը, որ նա դրսևորում է ժողովրդավարական անցումային շրջանում Հայաստանում, վերջում ավելացրեց պրոֆ. Լ. Հարությունյանը:

Ուշադրությամբ լսվեցին նաև ամուսիններ, թեհրանի պետական համալսարանի հայազգի պրոֆեսորներ, ֆիզիկոս Կարո Լուկասի և ազգագրագետ Էմիլիա Ներսիսյանի զեկուցումները: Դրանցից առաջինը նվիրված էր մշակութային արժեքների մոդելավորման հիմնահարցերին, իսկ երկրորդում XXI դարի կրթության խնդիրները դիտարկվում էին մարդաբանական ու էթնոլոգիկաբանական տեսանկյունից:

Գիտաժողովում կարդացված մյուս զեկուցումները նվիրված էին ուսումնական ծրագրերի բովանդակությունը ազգային և միջազգային չափանիշներին և պահանջներին համապատասխանեցնելու (Պ. Նահապետյան, ԱՄՆ, Միչիգանի համալսարան), մշակութային երկխոսության ծանաչման և հանդուրժողականության (Օ. Քեշիշյան, ԱՄՆ, Գլենդելի Քոնյունիթի ջուլեջ), բարձրագույն կրթության համակարգում միջազգային համագործակցության զարգացման ռազմավարական աղբյուրների օգտագործման (Է. Լեհերման, ԱՄՆ, միջազգային հարաբերությունների բաժնի քաղաքացիական կրթության ծրագիր), բարձրագույն կրթության համակարգում որակի ձեռքբերման ասպարեզում Օքսֆորդի համալսարանի փորձի ընդհանրացման ու յուրացման (Հ. Գուտբրատ, քաղաքացիական կրթության ծրագրի պրոֆեսոր) խնդիրներին:

Գիտաժողովում կարդացվեցին նաև

այլ զեկուցումներ, որոնք արժարժուն էին կրթության և գիտության զարգացման խնդիրները, ընդհանրացնում տարբեր համալսարանների փորձը: Կարելի է ասել, որ ԵՊՀ-ում կազմակերպված ներկա միջազգային գիտաժողովը քննարկեց մի շարք հրատուսայ խնդիրներ, որոնք ուրվագծում էին երրորդ հազարամյակում համալսարանական կրթության և գիտության զարգացման հեռանկարները:

Ամփոփելով գիտաժողովի արդյունքները կազմակերպիչի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ կարդացված բոլոր զեկուցումները հրատուսայ էին, պարունակում էին նոր հարցադրումներ ու գաղափարներ, որոնք, անշուշտ, կծառայեն իրենց նպատակին և հաշվի կառնվեն գալիք հազարամյակում համալսարանական կրթության ու գիտության միջազգայնացման ընդհանուր համակարգում:

* * *

Միջազգային գիտաժողովից հետո պատվիրակությունների ղեկավարների և տոնակատարությանը մասնակցելու համար երևան ժամանած արտասահմանյան հյուրերի հետ գիտխորհրդի նիստերի դահլիճում հանդիպեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Հանդիպման ընթացքում շոշափվեցին արտասահմանյան առաջատար համալսարանների և ԵՊՀ-ի միջև ուսումնագիտական և մշակութային կապերի ընդլայնման խնդիրներ:

* * *

ԵՊՀ հոբեյանին էր նվիրված հոկտեմբերի 6-ին կայացած գիտխորհրդի հանդիսավոր նիստը, որին մասնակցում էին գիտխորհրդի անդամները, արտասահմանյան համալսարանների պատվիրակությունների ղեկավարներ, հանրապետության բուհերի ռեկտորներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ և հյուրեր:

Նիստին ներկա էր նաև Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանը:

Նիստը բացեց գիտխորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը: Հոբեյանի առթիվ ջերմորեն շնորհավորելով նիստի մասնակիցներին և գիտխորհրդի անդամներին՝ նա նշեց, որ բազմաթիվ հոբեյանների ու միջոցա-

ուումների հեղինակ համալսարանը նման տոնական առիթով առաջին անգամ է իր հարկի տակ ընդունում հանրապետության նախագահին, ուստիև խորին շնորհակալություն է հայտնում Ռ. Քոչարյանին՝ մայր բուհի հանդեպ ցուցաբերած ուշադրության ու հոգատարության համար: Մեծագույն գնահատանքի արտահայտություն էր նաև, նշեց ռեկտորը, ՀՀ նախագահի հոկտեմբերի 4-ի հրամանագրով գիտության և կրթության ասպարեզներում ձեռք բերած ակնառու նվաճումների համար և ԵՊՀ 80-ամյա հոբելյանի կապակցությամբ մի խումբ համալսարանականների «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի» շքանշանով և «Մովսես Խորենացու», «Անանիա Շիրակացու» ու «Մխիթար Գոշի» մեդալներով պարգևատրելու որոշումը:

Ապա ռեկտորը ծայրը տվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին: Նա, ողջունելով ԵՊՀ հոբելյանը, ընթերցեց Հայաստանի կրթության ու գիտության զարգացման ասպարեզում համալսարանի ունեցած բացառիկ դերն ու նշանակությունն արժևորող իր ուղերձը, որում մասնավորապես ասված է.

«Հարգելի բարեկամներ, հարգարժան հյուրեր, շնորհավորում եմ երևանի պետական համալսարանի դասախոսական կազմին, ուսանողներին, բոլոր աշխատակիցներին Հայաստանի Հանրապետության մայր բուհի հիմնադրման 80-րդ տարեդարձի կապակցությամբ:

Լինելով նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին աշխարհիկ բարձրագույն ուսումնական և գիտական հաստատությունը երևանի պետական համալսարանն աշխարհի տարբեր անկյուններից հայրենիքում համախմբեց հայ գիտնականների մի ամբողջ աստղաբույլ, որի դերը մեր ժողովրդի գիտական և կրթական զարգացման գործում անհնար է գերազնահատել: Մեծ է երևանի պետական համալսարանի դերն ու նշանակությունը վերջին հարյուրամյակի մեր ժողովրդի կյանքում: Հիմնադրվելով պատմական ծանր ժամանակաշրջանում՝ համալսարանն արժանիորեն շարունակել է հայկական միջնադարյան բարձրագույն կրթօջախների Անիի, Հաղպատի, Սանահինի, Գլածորի, Տաթևի համալսարանների հայրենանմուշ գործը: Իր գոյության 80 տարիներին համալսարանն անմնացորդ ծառայել է հայ ժողովրդին ու հայրենիքին: Նրա բազմահազար շրջանավարտներն իրենց մասնագիտական կարողություններն

ու ջանքերը ներդրել են ինչպես հայրենիքի, այնպես էլ Ափյուռքի բարգավաճման գործում: Համալսարանի ամբիոնների հիմքի վրա են ձևավորվել մեր երկրի բազմաթիվ բուհեր: Մեծ են համալսարանի ծառայությունները՝ մատուցված Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիային և գիտաարտադրական միավորումներին՝ նրանց հիմնադրման և կազմավորման աշխատանքներում: Բացառիկ է մեր համալսարանի դերը, որպես խոշորագույն հայագիտական կենտրոն: Այս առումով համալսարանը համազգային կառույց է: Դա իր արտացոլումն է գտել «Կրթության մասին» օրենքում և արժևորվել համալսարանին տրված ինքնավարությամբ:

Մեր երկրի հպարտությունը կազմող գիտական մեծ ներուժի ակունքներում երևանի պետական համալսարանն է, որը, հարթահարելով վերջին տասնամյակի, մասնավորապես 1992-1995 թվականների բազմաթիվ դժվարություններ, այսօր վստահաբար և հաստատուն քայլերով զարգանում է: Համալսարանը շարունակում է պատվով կատարել հայրենիքի, ինչպես նաև Ափյուռքի երիտասարդ մտավորականների նոր սերնդի նախապատրաստման և ձևավորման սրբազան առաքելությունը: Մայր բուհը շարունակում է նաև իր արդյունավետ գործունեությունը, որպես հանրապետության ամենահեղինակավոր գիտական կենտրոններից մեկը:

Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում համալսարանն արժևորվում է որպես գիտակրթական և մշակութային խոշոր կենտրոն, որը հանձն է առնում այդ ժողովրդի պատմամշակութային արժեքների զարգացումը: Պետականության հզորացման և համակողմանի առաջընթացի ուղին բռնած մեր երկրում կան առանձին կառույցներ, որոնք, հիրավի, պետք է համարվեն ազգային արժեքներ: Երևանի պետական համալսարանը դրանցից մեկն է և հասարակության ու պետության կողմից պետք է գնահատվի ըստ արժանվույն:

Կրկին շնորհավորում եմ համալսարանի դասախոսների և շրջանավարտների բոլոր սերունդներին և հատկապես հայրենիքի բարձր պարգևներին արժանացած մեր հարգարժան մտավորականներին՝ այս գեղեցիկ հոբելյանի առթիվ: Մաղթում եմ, որ գալիք հազարամյակում մեր մայր բուհը շարունակի և հարստացնի հայ ժողովրդի մեծ երախ-

տավորների հիմնած գիտական ու կրթական օջախի ավանդույթները և իր բարի համբավը շարունակի տարածել նաև Հայաստանի սահմաններից դուրս»:

Հնորիավորական ուղերձն ընթերցելուց հետո Ռ. Քոչարյանը նշեց, որ ինքը մեծ պատիվ է համարում կատարելու բարձր պարգևների հանձնման պարտականությունը համալսարանի տոնական մթնոլորտում: Ապա նա առաջինը «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը հանձնեց ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանին և մեդալները՝ պարգևատրված մյուս 17 համալսարանականներին:

Այնուհետև պարգևատրվածների անունից շնորհակալական խոսքով հանդես եկավ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը և ներկաներին հավաստիացրեց, որ հանրապետության առաջատար բուհի բազմահազարանոց կազմը այսուհետև ևս ամեն ինչ կանի Հայաստանում միշտ բարձր պահելու գիտության ու կրթության ջախջ: Նա միաժամանակ շոշափեց համալսարանին հուզող մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են ՀՀ նախագահի ու կառավարության հոգատար վերաբերմունքն ու աջակցությունը:

Վերջում ռեկտորը մայր կրթօջախի կողմից, ի հիշատակ համալսարանականների հետ ունեցած հանդիպման, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին հանձնեց ԵՊՀ հոբելյանական ոսկե հուշամեդալ:

Այնուհետև ԵՊՀ գիտքարտուղար Հ. Ավետիսյանը ներկայացրեց ռեկտորի հրամանը՝ գիտության, կրթության և համալսարանական կյանքի այլ ասպարեզներում ձեռք բերած նվաճումների համար ԵՊՀ-ի հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ մի խումբ համալսարանականների ԵՊՀ ոսկե հուշամեդալով պարգևատրելու մասին: Ռեկտորի նույն հրամանով մի շարք համալսարանականներ պարգևատրվել են արծաթե հուշամեդալով: Պրոֆեսորադասախոսական կազմի, գիտաշխատողների և աշխատակիցների մի մեծ խումբ էլ պարգևատրվեց ՀՀ կրթության և գիտության նախարարության կամ համալսարանի ռեկտորատի պատվոգրերով ու դրամական պարգևներով:

Այնուհետև ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը հրապարակեց ԵՊՀ գիտխորհրդի ս. ք. հոկտեմբերի 1-ի որոշումը՝ արտասահմանյան ճանաչված 5 գիտնականների «ԵՊՀ պատ-

վավոր դոկտորի» գիտական աստիճան շնորհելու մասին, որից հետո նա այդ բարձր տիտղոսի վկայագրերը հանձնեց իրենց տերերին, որոնք եկել էին մասնակցելու համալսարանի 80-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններին:

ԵՊՀ պատվավոր դոկտորի բարձր տիտղոսին արժանացածների անունից նիստում շնորհակալական խոսքով հանդես եկան Ֆրանսիայի Սոնպելյե-1 համալսարանի պրոֆեսոր Ժան Ժակ Աերանոն, Սոնպելյե-2 համալսարանի նախագահ, պրոֆ. Ժան Կլոդ Գրիյոն, Սոնպելյե-3 Պոլ Վալերիի անվան համալսարանի պրոֆեսոր Սիշել Գերոյը: Վերջինս նաև իրենց համալսարանի հուշամեդալը հանձնեց ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանին:

Ելույթ ունեցողները, օգտվելով առիթից, հիշարժան հոբելյանի կապակցությամբ ջերմորեն շնորհավորեցին պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը: Նրանք միաժամանակ հավաստիացրին, որ իրենք ամեն ինչ կանեն Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությունն ավելի ամրապնդելու և ընդլայնելու ուղղությամբ:

Ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը այնուհետև «ԵՊՀ պատվավոր բարերարի» վկայագիր հանձնեց բարեգործ Լևոն Մակարյանին, որը լուրջ աշխատանք է կատարել Անամիա Շիրակացու արձանի և Յու. Ղամբարյանի ու Վ. Համբարձումյանի կիսանդրիների պատրաստման ու տեղադրման համար:

Ապա գիտխորհրդի ընդլայնված նիստում շնորհավորանքներով ու ողջույնի խոսքերով հանդես եկան ՀՀ կրթության և գիտության նախարար, ակադեմիկոս Էդ. Ղազարյանը, ԼՀՀ Աժ նախագահ Օ. Եսայանը, ԼՀՀ կրթության և գիտության նախարար Հ. Գրիգորյանը, Արցախի պետական համալսարանի ռեկտոր Պ. Գևորգյանը, Դուբնայի ՄՀՄԻ պրոֆեսոր Ա. Սիսակյանը, Բոլոնիայի (Իտալիա) համալսարանի պրոֆեսոր Պիեռ Ուզո Կալցոլարին, Հավայիի ամերիկյան համալսարանի պրեզիդենտ Հենրի Սաֆափին, Վենետիկի Միսիթարյան միաբանության հայր Լևոն Ջեքիանը, Յակուտիայի համալսարանի պրոֆեսոր Պավել Ղազարյանը, որը ներկայացրեց նաև իրենց համալսարանի ռեկտորի ողջույնի ուղերձը, Օդեսայի համալսարանի պրոռեկտոր, պրոֆ. Նիկոլայ Կովալենկոն, Տաշքենդի համալսարանի պրոռեկտոր, պրոֆ. Խոջիաբբար Տոյչիևը:

ԵՊՅ 80-ամյակը ողջունեցին և հուշանվերներ հանձնեցին նաև հանրապետության գրեթե բոլոր պետական բուհերի ղեկավարները, մասնավոր առանձին բուհերի ներկայացուցիչներ, ՀՀ սեյմիկ ազգային կենտրոնի տնօրեն Ս. Բալասանյանը և ուրիշներ:

Վերջում ղեկավարը հայտարարեց, որ ԵՊՅ հորեյանի կապակցությամբ ղեկավարատի անունով ստացվել են հարյուրավոր շնորհավորական հեռագրեր և ուղերձներ Սփյուռքի, արտասահմանյան երկրների, ԱՊՀ հանրապետությունների և Հայաստանի համալսարաններից, գիտական կենտրոններից, հասարակական-մշակութային կազմակերպություններից, առանձին անհատներից ու նշանավոր գործիչներից:

* * *

Հանրապետության կրթության և գիտության առաջատար հաստատության Երևանի պետական համալսարանի 80-ամյակին նվիրված հորեյանական հանդիսությունների պատկերահանդիսացավ հոկտեմբերի 6-ին Ա. Սպենդիարյանի անվան ազգային օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մեծ դահլիճում տեղի ունեցած հանդիսավոր նիստը, որին մասնակցում էին ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ արքեպս. Ն. Պողոպոսյանը, կառավարության անդամներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, սփյուռքահայեր, ԵՊՅ շրջանավարտներ, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ, ԱՊՀ հանրապետությունների և արտասահմանյան մի շարք երկրների հոշակավոր համալսարաններից պատվավոր հյուրեր:

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց ԵՊՅ ղեկավոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը:

- Այս օրերին, - ասաց նա, - նշվում է մեր հանրապետության պառաջատար ուսումնագիտական հաստատության Երևանի պետական համալսարանի հիմնադրման 80-ամյակը: Այդ հորեյանը մեր ժողովրդի մշակութային կյանքում կարևոր իրադարձություն է, որն առիթ է ներկայացնում արժեքավորելու և իմաստավորելու անցած տասնամյակների կրթության և մշակույթի բնագավառներում հանրապետությունում ձեռք բերված պատմական նվաճումները, միաժամանակ նախանշելու այնօրվա ու մոտակա գալի-

քում համալսարանի գիտամանկավարժական մեծ կոլեկտիվի և ուսանողության անելիքները:

Համալսարանի հորեյանը նշվում է հանրապետության համար դժվարին պայմաններում: Դանդաղ են ընթանում վերակառուցման աշխատանքները տնտեսության ոլորտում: Դեռևս լուծված չէ Արցախի Հանրապետության կարգավիճակի հարցը: Այս դժվարին պայմաններում հանրապետության ղեկավարությունը այնուամենայնիվ հնարավորություն գտավ աջակցելու համալսարանին՝ նրա հորեյանը պետական մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար: Մի խումբ համալսարանականներ արժանացել են պետական պարգևների:

Լինելով Հայաստանի առաջին Հանրապետության հասակակից՝ Երևանի պետական համալսարանն իր գոյության 80 տարիների ընթացքում արժանի ներդրում է կատարել երկրի տնտեսական և հոգևոր զարգացման մեջ: Երևանի համալսարանից են սկիզբ առել մեր հանրապետության գրեթե բոլոր բուհերը, համալսարանն է եղել այն հիմքը, որի վրա հետագայում ստեղծվել է Հայաստանի գիտությունների ակադեմիան: Մեծ է համալսարանի դերը նաև սփյուռքահայ երիտասարդությանը հայրենի գիտության և մշակույթին հաղորդակից դարձնելու գործում: Չնայած հանրապետության անկախ դժվարություններին, մենք չենք կասկածում, որ Հայաստանը դուրս է գալու այս ծանր վիճակից, և Երևանի պետական համալսարանը շարունակելու է իր հետագա հայրենամարտը գործունեությունը: Ամտարակույս, ներկա հորեյանը կարևոր խթան է հանդիսանալու՝ համալսարանի հետագա զարգացման ճանապարհին, նպաստելու է դասախոսական և գիտական կադրերի համախմբմանը՝ գիտամշակութային կարևորագույն խնդիրներ լուծելու համար:

Սիրելի բարեկամներ, մեր հորեյանական հանդիսություններին մասնակցելու են եկել արտասահմանյան շատ հյուրեր: Հյուրերի զգալի մասը մեր գործընկերներն են համալսարանների ղեկավարներ, նախագահներ, փոխնախագահներ, ղեկավարներ և պրոֆեսորներ:

Արտասահմանյան համալսարանները հանդիսություններին ներկայացնում են Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան, Մոսկվայի պետա-

կան միջազգային հարաբերությունների և Յակուտիայի պետական համալսարանների, Վրաստանից՝ Թբիլիսիի պետական համալսարանի, Ուզբեկստանից՝ Տաշքենդի պետական համալսարանի, ԱՄՆ-ից՝ Ֆրեդ-Նոյի, Միչիգանի, Անգլիայից՝ Լոնդոնի, Ֆրանսիայից՝ Մոնպելյե-1, 2, 3, Մարսելի, Փարիզ-6, Գերմանիայից՝ Բեռլինի, Գամբուրգի, Իտալիայից՝ Բոլոնիայի, Վենետիկի, Կանադայից՝ Մակ Գիլի և այլ համալսարանների պատվիրակությունները: Զյուրեռի թվում են նաև մեր համալսարանի նվիրյալ բարեկամներ՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության, Թեքեյան մշակութային միության, Հայ կրթական հաստատության, Հայ պրոֆեսիոնալների միության, Երևանի պետական համալսարանի բարեկամների միության և այլ հաստատությունների ներկայացուցիչներ, բարեգործներ և շրջանավարտներ: Նրանց բոլորին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Թույլ տվեք հանդիսավոր միստը, նվիրված Երևանի պետական համալսարանի 80-ամյակին, հայտարարել բացված:

Ապա ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊՀ հորեյանական կառավարական հանձնաժողովի նախագահ, ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանը:

Լավագույն առիթ է, իր խոսքում նշեց նա,՝ մեկ անգամ ևս անդրադառնալու հայ մտավորականներին, հասկանալու համար ազգի անցած ուղին, նկարագիրն ու հոգեբանությունը: Հայոց համալսարանը հիմնադրվել է առաջին հանրապետության տարիներին, երբ Հայաստանը գտնվում էր սոցիալ-տնտեսական, քաղաքական աներևակայելի պայմաններում: Համալսարանի ստեղծումը շարունակությունն էր դարասկզբի այն գոյապայքարի, որ մղում էր մեր ժողովուրդը Սասունում, Շապին-Գարահիսարում, Վանում, Սարդարապատում: Ցեղասպանության ենթարկված, հայրենիքի մեծագույն հատվածը կորցրած, գաղթական դարձած հայությունը, համալսարան հիմնադրելով, փաստում էր աշխարհին, որ ինքը ապագային նայող հավաքական ուժ է և հավատում է իր ներուժին, գիտակցում սեփական արժեքները համակարգելու դերը: Արժանին մատուցեց մորանկախ Հայաստանի ակունքների մոտ կանգնած այն անհատականություններին, ովքեր գիտակցեցին, որ պետության հիմքը, ուժի աղբյուրը կրթությունն ու բանակն են: Այդ սերունդն էր, որ մի ձեռ-

քով ձևավորում էր զինված ուժերը, կասեցնում երկրի անկախությանն սպառնացող խռովությունն ու ահաբեկչությունը, մյուսով բացում էր առաջին համալսարանը, դպրոցները, հանրային գրադարանները, մշակութային օջախները:

Այսօր հիշատակենք նաև մեր այն մտավորականներին, որոնք աշխարհի ամենատարբեր ծայրերում թողնելով գիտական, մշակութային հարմարավետ ու բարեկեցիկ կյանքը, եկան շրջափակման և սովի ճիրաններում գտնվող հայրենիք՝ անկախ պետականության համար մղվող կենսական պայքարին սատարելու: ԵՊՀ-ն տարիների ընթացքում համայն հայության համար դարձավ գիտության և մշակութային առաջատար օջախ: Խորհրդային Հայաստանի ղեկավարները ոչ միայն հաստատագրեցին ազգային ուսումնական հաստատության կարգավիճակը, այլև ծրագրավորված և հետևողական քայլերով այն վերածեցին գիտաուսումնական կարևոր կենտրոնի:

ԵՊՀ-ն կարևոր ավանդ ունի Հայաստանում հայրենասիրության, ժողովրդավարության, ազատ խոսքի և համամարդկային արժեքների ամրապնդման գործում և իր գիտական, կրթական վաստակով ձեռք է բերել միջազգային ճանաչում:

Վստահ եմ, որ համալսարանի ղեկավարությամբ, պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությամբ կիաջողվի տեր կանգնել համալսարանի ավանդույթներին: Չեմ կասկածում, որ այս հաստատությունը դարձել է ազատ և անկախ Հայաստանի մտավոր ներուժի կերտման իրական դարբնոց:

Վարչապետի ողջույնի խոսքից հետո Երևանի պետական համալսարանի անցած ուղու մասին զեկուցումով հանդես եկավ նրա ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը: Նա իր զեկուցման մեջ անդրադարձավ միջնադարյան Հայաստանի համալսարաններին, որոնք հսկայական գործ են կատարել գիտության և մշակույթի ասպարեզներում: Նրա վկայությամբ, հայոց կրթական համակարգի վերականգնման և զարգացման գործում բացառիկ դեր են ունեցել Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

Ինչ խոսք, համալսարանի 80-ամյա պատմական ուղին եղել է ինքնահաստատման մեծ հաջողությունների, գիտական

կարևոր հայտնագործությունների և, միա-
ժամանակ, անհաջողությունների ու կո-
րուստների ճանապարհ: Ութսուն տարվա
ընթացքում համալսարանը Հայաստանին և
նախկին ԽՍՀՄ-ին տվել է 70 հազարից ավե-
լի բարձրորակ մասնագետներ: Ներկայումս
համալսարանում դասավանդվում և գիտա-
հետազոտական աշխատանքները տարվում
են 20 ֆակուլտետներում և 103 ամբիոննե-
րում, բազմաթիվ գիտահետազոտական և
ուսումնական լաբորատորիաներում, «Լա-
զերային տեխնիկա» ԳԱՄ-ում և հայագիտա-
կան կենտրոնում: Համալսարանի շուրջ
3300 աշխատողներից 1700-ը դասախոսներ
ու գիտաշխատողներ են, որոնցից 39-ը ՀՀ
ԳԱԱ ակադեմիկոսներ են, մոտ 200-ը՝ գիտու-
թյունների դոկտորներ ու պրոֆեսորներ, իսկ
514-ը՝ թեկնածուներ ու դոցենտներ:

Համալսարանը հանրահայտ գիտա-
կան կենտրոն է, ասաց զեկուցողը, ուր գոր-
ծում են միջազգային ճանաչում ունեցող մի
շարք գիտական դպրոցներ, որոնք զարգաց-
ման մոր հնարավորություն են ստացել: Ժա-
մանակի քննությունը բռնելու իմաստով ա-
ռավել շահեկան վիճակում է գիտության
բնագիտական թևը: Համալսարանը խոշոր
նվաճումներ ունի ֆիզիկայի (տեսական ֆի-
զիկա, օպտիկա, միջուկային ֆիզիկա, պինդ
մարմնի ֆիզիկա, կիսահաղորդիչների ֆի-
զիկա, ռադիոֆիզիկա, լազերային տեխնի-
կա), մաթեմատիկայի (կոմպլեքս փոփոխա-
կանի ֆունկցիաների տեսություն, կոմբինա-
տորային ինտեգրալ երկրաչափություն, դի-
ֆերենցիալ հավասարումներ ու ֆունկցիո-
նալ անալիզ, ալգորիթմական լեզուներ), մե-
խանիկայի (ամիզոտրոպ, անհամասեռ ա-
ռածգական մարմիններ, մագնիսաառածգա-
կանության և արածգականության մաթեմա-
տիկական տեսություն), քիմիայի (լաբտոն-
ների քիմիա), կենսաբանության և այլ բնա-
գավառներում: Բնագիտական ավանդական
դպրոցների գործառնմանը զուգընթաց ձևա-
վորվում են գիտական մոր ուղղություններ
ու թեմաներ, որոնց զարգացմանը խթանում
է միջազգային համագործակցությունը:

Անդրադառնալով հումանիտար գիտու-
թյուններին՝ զեկուցողը ասաց, որ դրանք
հիմնականում ներառում են հայագիտու-
թյունը, հայ լեզվաբանական և փիլիսոփա-
յական փաստարկման հայտնի դպրոցները:
Այս իմաստով համալսարանի, ինչպես նաև
հանրապետության համար հրատապ է հու-
մանիտար գիտելիքների զարգացման հիմ-

նախնդիրը: Այսօր այն ծավալվում է երեք
ուղղությամբ՝ 1. Հայաստանի և հայության
զարգացման հիմնախնդիրների դիտարկում
արդի քաղաքակրթության առաջընթացի
հենքի վրա, 2. Հայաստանի քաղաքական,
հասարակական և տնտեսական կյանքի փո-
փոխությունների ուսումնասիրում, 3. Հայա-
գիտության, որպես գիտական հետազոտու-
թյան մեկ միասնական բնագավառի:

Ընդհանուր առմամբ այսօր համալսա-
րանում իրականացվում է գիտական գործու-
նեություն 217 թեմաներով (այդ թվում՝ պետ-
պատվերով 121-ը) և միջազգային գիտա-
տեխնիկական ծրագրերով: Տարեկան
կտրվածքով հրատարակված գիտական ար-
դյունքները կազմում են հանրապետության
ամբողջ գիտական «արտադրանքի» մոտ 40
տոկոսը: Գիտությունը յուրահատուկ դեր ու-
նի թե՛ համալսարանական կրթության, թե՛
հասարակության ու տնտեսական զարգաց-
ման համար: Ուստի այն պետական աջակ-
ցության հույժ կարիք ունի խթանելու հիմնա-
րար գիտությունների և Հայաստանի գիտա-
տեխնիկական ներուժի զարգացմանը:

Զեկուցողը, անդրադառնալով ԵՊՀ մի-
ջազգային կապերին, ասաց, որ դրանք
սկիզբ են առել մրա հիմնադրման առաջին
տարիներից: Հայրենիքի ազգային անդրա-
նիկ կրթօջախը փորձված բարձրորակ դա-
սախոսների անհրաժեշտություն էր գզում:
Եվրոպայի հայտնի համալսարաններից
Երևան տեղափոխվեցին բազմաթիվ հայազ-
գի անվանի գիտնականներ: Միաժամանակ
մրանց կապերի շնորհիվ Եվրոպայի համալ-
սարանների հետ ստեղծվեցին ակադեմիա-
կան առնչություններ: 1926-1927 ուսումնա-
կան տարվանից համալսարան ուսումնա-
ռության եկան առաջին սփյուռքահայերը:
Անցած տարիներին համալսարանում սովոր-
ել են մոտ 6300 օտարերկրացիներ՝ աշ-
խարհի 81 երկրներից, որոնցից 2600-ը եղել
են սփյուռքահայեր: Համալսարանի լրիվ
դասընթացներն ավարտել և բարձրագույն
կրթության վկայագիր են ստացել, ինչպես
նաև թեկնածուական և դոկտորական ատե-
նախոսություններ են պաշտպանել 629 օ-
տարերկրացիներ, որոնցից 373-ը սփյուռ-
քահայեր են: Վերջին տասնամյակում թեկ-
նածուական ատենախոսություն պաշտպա-
նել են 56 օտարերկրացիներ, որոնցից 14-ը
սփյուռքահայեր են: Իսկ երեք հոգի էլ
պաշտպանել են դոկտորական ատենա-
խոսություններ:

Երկայուն համալսարանը համաձայնագրեր ունի աշխարհի 25 երկրների 74 համալսարանների գիտական կենտրոնների հետ: Միջազգային համագործակցության շրջանակները ներառում են ուսումնագիտական գործունեության բոլոր ոլորտները: Փոխանակվումներին տարեկան մասնակցում է 200-250 մարդ: Համալսարանն ակտիվ մասնակցություն ունի միջազգային գիտատեխնիկական և ուսումնական ծրագրերին, որոնք այսօր մի կողմից ծառայում են որպես լրացուցիչ ֆինանսական կարևոր աղբյուր, իսկ մյուս կողմից՝ գիտության ու կրթության միջազգայնացման հիմնական միջոց: Երևանի պետական համալսարանն այսօր համալսարանականների միջազգային ընկերակցության, եվրոպական համալսարանների ընկերակցության, համալսարանների մախագահների միջազգային ընկերակցության լիիրավ անդամ է:

Համալսարանի ներկան բնորոշվում է ոչ միայն հաջողություններով ու բարեփոխումներով, այլև էական դժվարություններով ու պրոբլեմներով, որոնք չեն կարող սքողվել նույնիսկ հորեյանական շղարշով, խնդիրներ, որոնք պայմանավորված են անբարենպաստ գործոններով ու խոչընդոտում են համալսարանական առաջընթացը: Բնագիտական մասնագիտությունների գծով դիմորդների քանակի տարեցտարի նվազում, գործազրկություն, դասախոսական կազմի ծերացում, ուսումնական և գիտական լաբորատորիաների սարքավորումների ֆիզիկական և բարոյական մշակածություն, անբավարար ֆինանսավորում, - ահա այն իրողությունները, որոնք առավել մտահոգիչ են այսօր, ընդգծեց գեկուցողը:

Նյութական և ֆինանսական միջոցների սղության պատճառով պակասել են ուսանողական միջոցառումները, մեծ դժվարություններ կան ուսանողների կենցաղի կազմակերպման, հանրակացարաններում նրանց ապրուստի համար տարրական պայմաններ ստեղծելու գործում:

1990-ական թվականների սկզբին հանրապետությունում ստեղծված քաղաքական, գաղափարական, տնտեսական և մշակութային նոր իրադրությունը միանգամայն այլ պահանջներ էր ներկայացնում կրթյանը, ինչն անհրաժեշտ էր դարձնում ոչ միայն պահպանել համալսարանի լավագույն ավանդույթները, այլև ձեռք բերել կրթության նոր որակ: Այդ նոր համալսարանի

կայացմանն էր ուղղված Հայաստանի Հանրապետության մախագահի 1992 թ. հրամանագիրը, որով ԵՊՀ-ին առանձնաշնորհվեց ինքնավար կրթական, գիտական և մշակութային հաստատության կարգավիճակ:

Համալսարանը մախաձեռնեց իր վերափոխումը, որը կազմակերպվեց երկու ուղղությամբ՝

1. ԵՊՀ-ի գործունեության վերափոխման իրավական հիմքի ստեղծում, որը սկիզբ առավ 1992 թ. համալսարանի նոր օրինադրության մշակումով, ինչը կիրառման մեջ դրվեց 1996 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո: 1999 թ. ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքը վերջնականապես վերահաստատեց ԵՊՀ-ի, իբրև կրթության և գիտության կենտրոնի, ինքնավարությունը, ինչպես նաև առհասարակ համալսարանական կրթության ազատականությունը:

2. Բուն կրթական համակարգի վերափոխում:

Այսպիսով, ԵՊՀ-ի առջև ծառայած էին ներհակ խնդիրներ, մի կողմից անխուսափելի էր դառնում միջազգային կրթական չափանիշների ընդունումը. մյուս կողմից՝ սեփական ավանդույթների պահպանումը և ազգային արժեքների վերագտնումը: Նշված հանգամանքները համալսարանի վերափոխումը դարձնում էին բավականին բարդ, համապարփակ ներառելով իրավական, սոցիալական և այլ բազմափուլ հայեցակետեր:

Վերափոխման առաջին փուլը (1993-1999 թթ.), որն ուղղված էր համալսարանի ինքնապահպանմանը, իրագործվում էր բարդ պայմաններում շրջափակում, պատերազմ, սոցիալ-տնտեսական ծանր կացություն, ինչը հարուցում էր մի շարք դժվարություններ: Նշված իրավիճակը բացասաբար էր ազդում վերափոխման ընթացքի վրա: Այն ընդգրկում էր համալսարանի գործունեության բոլոր կողմերը՝ կրթության կառուցվածքը (անցում եռաստիճան կրթական համակարգի), բովանդակությունը (ուսումնական ծրագրերի նորացում), ուսումնական գործընթացը (ուսանողների գիտելիքների գնահատման նոր կանոնակարգի, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրում և այլն), միջազգային կապերը (համագործակցության ընդլայնում), կառավարումը և ֆինանսավորումը (ներհամալսարանական կյանքի ժողովրդավարացում, արտաբյուջետային ֆի-

նախնական ճակատի և ծավալի աճ) և այլն:

Համալսարանական դասընթացների ծրագրերի նորացումն առիթ էր՝ ամբիոններին և դասախոսական կազմին ԵՊՀ-ի զարգացման աշխատարար, բայց և անհրաժեշտ հիմքի ստեղծմանը անմիջական մասնակից դարձնելու գործում: 1995-96 ուսումնական տարվանից գործածության մեջ դրվեցին բակալավրատի ուսումնական նոր ծրագրերը: Նրանցում պահպանված էր ԵՊՀ-ում ավանդվող դասընթացների հիմնական էությունը՝ լրամշակված միջազգային կրթությանը բնորոշ միջառարկայականության սկզբունքով: Այս շարունակական աշխատանքն է, որ պիտի ստեղծի ԵՊՀ-ի միջազգային ճանաչման հիմքը:

Համալսարանական կրթության համապարփակության ապահովմանն էր ուղղված մի շարք նոր՝ աստվածաբանության, միջազգային հարաբերությունների, քաղաքագիտության, սոցիալական աշխատանքի, արվեստաբանության, օդերևութաբանության, ջրաբանության, թարգմանչական գործի, դեղագիտության և այլ մասնագիտությունների հիմնումը՝ համապատասխան ամբիոններով և հետազոտական հնարավորություններով: Նորաստեղծ ամբիոններից շատերը կոչված էին ոչ միայն ապահովելու տվյալ մասնագիտության պատրաստությունը: Նրանք ստեղծեցին և վերանշակեցին համահամալսարանական մի շարք դասընթացներ: Նոր համակարգի քառամյա գործունեության (1995-99 թթ.) արդյունքների վերլուծությունը պարզում է, որ վերափոխումն ընդհանուր առմամբ պետք է գնահատել դրականորեն, քանզի մարտավարական հիմնախնդիրը լուծված է, կասեցվել է համալսարանական կրթության անկումը, ձևավորվում են ռազմավարական նպատակի իրագործումն ապահովող մի շարք բաղադրիչներ: Վերափոխման ձեռքբերումներն են՝ կրթության հիմնարարացումը և հումանիտարացումը, հաղորդակցության ընդլայնումը և ուսումնական գործընթացի ինտենսիֆիկացումը: Համալսարանի արդիականացումը անհնար է առանց համակարգչային արդի տեխնոլոգիաների լայն կիրառման, գրադարանային և հրատարակչական գործերի մեջ նոր տեխնիկայի ներդրման: Այս կապակցությամբ վերջին երեք-չորս տարիների ընթացքում ձեռնարկվել են բազմաբնույթ միջոցառումներ, որոնց հետևանքով ուսումնագիտական ամբողջ համալիրը իր կառույցներով հա-

մարվել է մեծ թվով համակարգիչներով, դրանց հենքի վրա ստեղծվել է ներքին համալսարանական տեղեկատվական ցանց, որը միացված է համաշխարհային ինտերնետ տեղեկատվական ցանցին: Մի քանի հարյուր համալսարանականներ ունեն իրենց էլեկտրոնային փոստի հասցեները: Կոմպյուտերիզացիայի ընթացքում է ամբողջ գրադարանային համալիրը, այն միացված է համաշխարհային հատուկ գրադարանային ցանցին: Ստեղծվում է էլեկտրոնային քարտարան մոտ երկու միլիոն կտոր գրքերի համար:

Համալսարանի վերափոխման քառամյա գործունեության արդյունքները վկայում են, որ ինքնապահպանման և կայուն գործառնման շնորհիվ նախադրյալներ են ստեղծվել նրա առաջընթացի համար, շարունակեց գեկուցողը: Համալսարանն անցնում է վերափոխման երկրորդ՝ զարգացման փուլ, որն ունի իր խնդիրները. ա) իրացնել օրենսդրորեն սահմանված ինքնավարությունը, ամբողջացնել համալսարանական կրթական քաղաքականությունը, բ) երիտասարդացնել համալսարանի գիտամանկավարժական կազմը՝ նրա պատրաստությունը համապատասխանեցնելով 21-րդ դարի փոփոխվող հասարակության պահանջներին, գ) խթանել համալսարանի ակադեմիական ու գիտական առանձնահատկությունների զարգացումը, համալսարանական գիտության առաջընթացը ծառայեցնել կրթության որակի բարձրացմանը, դ) հայագիտության համապարփակ զարգացման հիմքի վրա ապահովել հումանիտար կրթության պատշաճ մակարդակ՝ ուղղված էթնոկիրների ու հասարակության մշակութային սոցիալականացմանը և նոր արժեքների հաստատմանը, ե) ապահովել համալսարանի բարձր վարկը տարածաշրջանում և իրագործել նրա համազգային պատասխանատվությունը:

Կրթությունը միտված է ապագային, ուստի պիտի ապահովվենք համալսարանի զարգացումը՝ այն լավագույնս հարմարեցնելով 21-րդ դարում ազգային ու համամարդկային խնդիրների լուծմանը, եզրակացրեց ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը:

Ազգի մտավոր և հոգևոր զարգացման գործում ԵՊՀ-ի դերը բարձր գնահատեցին և հորեյանի առիթով ողջույնի խոսքեր ասացին Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Ներսես արքեպիսկո-

պոս Պոզապայանը, ԼՂՀ խորհրդարանի նախագահ Օլեգ Եսայանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ռեկտոր, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Անատոլի Սադովնիչին, Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր, ՎԳԱ ակադեմիկոս Ռոին Մետրևելին, որը հրապարակեց նաև իրենց համալսարանի գիտխորհրդի որոշումը՝ ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանին Իվանե Ջավախիշվիլու անվան մեդալով պարգևատրելու մասին: Նա այդ բարձր պարգևը հանձնեց ռեկտորին:

Ապա հանրապետության պետական բուհերի ռեկտորների խորհրդի անունից ԵՊՀ հոբեյանը ողջունեց Երևանի ճարտարագիտական համալսարանի նախագահ, ՀԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սարգսյանը:

Արտասահմանյան համալսարանների կողմից ողջույնի խոսքով հանդես եկավ Մոնպելյե-3 Պոլ Վալերիի անվան համալսարանի Հռոմի պատմության պրոֆեսոր, ԵՊՀ պատվավոր դոկտոր Միշել Գերոյը:

Վերջում ուսանողության անունից ողջույնի և շնորհավորանքի խոսք ասաց ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիանա Խաչատրյանը:

Հանդիսավոր նիստն ավարտվեց տոնապահ համերգով, որից հետո, նույն օրը երեկոյան, ԵՊՀ գիտական գրադարանի դահլիճում կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն: Ի դեպ, միջազգային գիտաժողովի մասնակիցների և հոբեյանական հանդիսություններին մասնակցելու եկած հյուրերի պատվին հոկտեմբերի 5-ի երեկոյան պատմության ֆակուլտետի Վարդգես և Ռիթա Պալյանների անվան դահլիճում նման

մի պաշտոնական ընդունելություն էլ կազմակերպվել էր ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի կողմից:

Հաջորդ երեք օրերի ընթացքում՝ հոկտեմբերի 7-9-ը, արտասահմանյան հյուրերի համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ հանրապետության տեսարժան վայրեր՝ Գառնի, Գեղարդ, Ջվարթնոց, Հառիճ, ինչպես նաև այցելություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

* * *

ԵՊՀ 80-ամյակին նվիրված բազմաթիվ այլ միջոցառումներ ևս տեղի ունեցան, որոնց բոլորին անդրադառնալն այստեղ հնարավոր չէ: Միայն մշեմը, որ մայր կրթօջախի հոբեյանը ունեցավ միջազգային հնչեղություն՝ մեծ արձագանք գտնելով ամենուր, մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը լայնորեն լուսաբանեցին բոլոր միջոցառումները: Հոբեյանի օրերին տպագրվեցին նաև մի շարք գրքեր, որոնցից արժե հիշատակել «Երևանի պետական համալսարան» պատկերագրող և գունավոր (հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն) առանձին-առանձին լրյս տեսած բուկլետը, «Երևանի պետական համալսարանը երեկ, այսօր, վաղը», «Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999)», «ԵՊՀ հայագիտական կենտրոնի հրատարակությունների մատենագիտությունը», «Գրական համալսարան» ժողովածուն և այլն: Այդ հոբեյանին է նվիրված նաև «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 30 տարիների մատենագիտությունը (1967-1996 թթ.) հայերեն և ռուսերեն, որն զբաղեցնում է հանդեսի մեկ առանձին ամբողջական համար (1997, N 1):

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ